Հովհաննես Թումանյան

Նահատակ

I

Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,
Երկնաբերձ լեռան զառիվայր կրծքին,
Հանգչում է վաղուց մի սուրբ նահատակ,
Կուսական և թավ ծմակի միջին:

Քանդված է մատուռն, քարերը ցրված,
Եվ ավերակի վերա սգառած,
Կանաչ բաղեղով խստապինդ գրկված
Նիրհում էր ուռին ճյուղերը փռած:

Խոնարհված էր խաչն յուր պատվանդանից
Եվ ընկած հեռու սուրբ ավերակից,
Իսկ գերեզմանը մեծ նահատակի
Մամռոտ նայում էր խաշամի տակից:

Գիշերներն այնտեղ կանթեղ չէր վառվում,
Այցելում էին նրան երեները,
Եվ միշտ հանգստյան երգ էր հորինում
Քամին, շարժելով լայն տերևները:

II

Այդ լուռ ու խաղաղ վայրում մենացած,
Երկար ժամանակ աստուծո մարդու
Անշուք շիրիմը մարդկանցից մնաց
Անհայտ և անզարդ, առանց այցելու:

Մինչև որ մի օր աստուծո հրամանով,
Երազ եկավ մի արդար մարդու մոտ,
Թե այս ինչ տեղը թաղված է մի սուրբ,
Ցավերով լիքը երկրին անծանոթ:

Այսպիսի հրաշքով նա հայտնվեցավ
Մարդկային ազգի փրկության համար,
Եվ հոչակավոր ուխտատեղ դարձավ,
Բարձրացավ խորան գեղեցկակամար:

III

Նա անտրտունջ, ասում է հին բանը,
Ինչպես քրիստոնյա բարեպաշտ և քաջ,
Պահելով Տիրոջ սուրբ պատվիրանը,
Գլուխը թեքեց թշնամու առաջ:

Եվ արդար մարդիկ տեսել են աչքով,
Ասում է նույնպես ավանդությունը,
Որ լույս է իջել երկնային հրաշքով
Եվ բժշկում է հիվանդությունը:

Հաճախ բերանովն արժանավորի
Հայտնել է երկրին աստծո կամքը,
Եվ ժողովուրդը գլխովին տեղի
Ձոնում է նրան իրան հարգանքը:

Բայց և շատ անգամ յուր զորությունը
Նա ցույց է տվել մի պատժով արդար,
Քանդելով մեկի ողջ տեղ ու տունը,
Մարդկանցն անհայտ մեղքերի համար:

Նա է մեղավորին տալիս պատիժը,
Արժանավորին ուզած բարիքը.
Նա է սահմանում, գործքին համեմատ,
Մահկանացուի գլխի գալիքը:

Ահա թե ինչու հայ ժողովուրդը,
Խաչ կամ նահատակ անունը տալով,
Ջուր է համարում մարդկային ջանքը,
Նրա մեծ զորքի վերա հուսալով:

Կամ երբ որ տերտերն յուր տուփը ձեռքին
Հայտնվում է նրան կրկին և կրկին,
Առատ շահելով, հանուն սուրբ խաչին,
Նա հավատում է թե՝ փրկեց հոգին:

IV

Անցնում է անցվոր այն մատրան մոտից
Երկյուղածությամբ և խաչակնքում,
Չարատանջ օրով դառնացած սրտից
Այսպես լիասիրտ աղոթում մտքում.

«Ո՞վ սուրբ Նահատակ, գլխովդ պտույտ գամ,
«Դուն հասցնես ինձ ապրուստ օրական,
«Քո մեծ զորքովդ, անգութ, անզգամ
«Թշնամուս ջնջես և առնես կոխան»:

* * *

Հայոց ժողովուրդն ահա խոնված
Հետևում է յուր ծերուկ տերտերին՝
Խաչից խնդրելու, որ բռնված
Երկինքը խնայե իրան արտերին:

Թե մի վարակիչ ցավ է տարածված,
Մարախն ուտում է գյուղացու ցանը,
Աքս «երկնառաք պատուհասի» դեմ
«Օրհնած հողն» է միակ դարմանը:

* * *

Արևը կրակ է թափում վերից.
Հայուհին ընկած խաչի առաջին,
Արյուն արցունք է չափում աչերից,
Օգնություն հայցում, հիվանդ է որդին:

Եվ զարդարում է ջերմեռանդ սրտով
Ծառի ճյուղերը յուր կտրած մազով.
Ուխտում է երկար պաս ու ծոմ պահել,
Ինչպես ազդել է խաչը երազով:

* * *

Ահա մի ծեր կին մաղախն ուսին,
Որդի չի ծնում մանկատի հարսին,
Պիտի յոթն գյուղ «խաչի սեր» ման գա,
Ամուլ արգանդին խաչը պտուղ տա:

Տատի ետևից քողը երեսին,
Ոտքերը բոբիկ, կուչ ու հուպ գալով
Գնում է հարսը գրավը ձեռքին,
Իրավ չըգործած մեղքերը լալով:

* * *

Ահա ուխտավորն ահով ու դողով
Խմբված լսում է պատգամավորին,
Որը պատմում է, իրան ծեծելով,
Ինչ է կամեցել երկինքը որին:

Սրան մուրազը, նրան աշխարանք,
Կամ պահանջում է զոհեր ծանրագին.
Մյուսին ցեղե՝ցեղ նզովք, բանադրանք,
Որ հայհոյել է յուր ընկնավորին:

Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,
Ուր չոր քարն էլ է ծլում, կանաչում,
Տեղացու սիրտը միաժամանակ
Մի գաղտնի երկյուղ հալում է, մաշում:

Նա իրան ուժին դեռ չէ հավատում,
Նա դեռ իրանից դուրս է որոնում
Բարօրությունը յուր չարքաշ կյանքի
Եվ գոհացումն հասած զրկանքի:

1888